ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով ձևավորված ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՏԳ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 06.03.2018թ. ժամը 17-00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա. Հովսեփյանը, Վ. Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը, և քարտուղար Ռ. Խաչատրյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ՏԳ-18/1 ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«Հայկարլի» ՍՊԸ (Ք. Երևան,Կիևյան 18/6)**
2. **«Լեգալ-Պլյուս» ՍՊԸ (Ք. Երևան,Հ. Հակոբյան)**
3. **«Վա-Հա» ՍՊԸ (Ք. Երևան,Ավան 4-րդ փ. 2-րդ նրբ, տուն 1)**
4. **ԱՁ Վարդան Մկրտչյան (Ք. Երևան,Երվանդ Քոչար 7/62)**

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ «Վա-Հա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի

«Վա-Հա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման մաս կազմող վճարման պահանջագրում բացակայում է թվային էլեկտրոնային ստորագրությունը՝ չի պահպանվել հրավերի 8.18 պահանջը, իսկ հավելված 4՝ գնային առաջարկում ընթացակարգի ծածկագիրը սխալ է գրված:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 «Հայկարլի» ՍՊԸ-ի, «Լեգալ-Պլյուս» ՍՊԸ-ի , ԱՁ Վարդան Մկրտչյանի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	քանակ	Նախահաշվային գին /ՀՀ դրամ/	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/			
				«Հայկարլի» ՍՊԸ*	«Լեգալ-Պլյուս» ՍՊԸ	«Վա-Հա» ՍՊԸ*	ԱՁ Վարդան Մկրտչյան*
1	Տպագրական աշխատանքներ	500	350000	309500	339000	377000	275000

*Հանդիսանում է ԱԱՀ չվճարող

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց.

1. Մերժել «Վա-Հա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգի) 40-րդ կետի 4-րդ ենթակետը:
2. Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **ԱՁ Վարդան Մկրտչյան**-ին:
3. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 11:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Հովսեփյան

_____ Վ. Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ռ. Խաչատրյան